ԳՈՂԱՐԻԱՄԱՐԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒՔԱԹԵԹԻ

№ 13 | կիրակի 7 ապրիլի | երկրորդ տարի | 1891



Յովհաննաւ Հայրիկ

Ծննդեան տարեդարձի առիթով, (5 ապրիլի 1820 թ.)

Ամենաւերջին լուսանկարից

ՄԱՀԱ ԳՈՅԺ

Հեռագիրները գուժեցին Պետերբուրգից որ մարտի 31-ին ի Տէր հանգեաւ Նորին Կայսերական Բարձրութիւն Օլգա Փէօդորովնան, նախկին Կովկասեան Փոխարքայի Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչի ամուսինը: Բոլոր այն կովկասեցիների համար, որոնք մօտ ծանօթ են Կովկասի փոխարքայութեան ժամանակներին եւ այն շրջանի գործունէութեանը՝ բոլոր կովկասեցիների համար էլ շատ տխրալի է այդ գոյժը: Շատ տարիներ չէ անցել այն օրւանից, երբ կովկասցի կինը ամբողջովին կաշկանդակապած էր արեւելեան կապանքներով, զրկւած ոչ միայն գիտութեան լուսից, այլ եւ զրկւած իսկ օդից եւ լոյս աշխարհից, նա պէտք է լինէր եւ գուցէ միշտ էլ մնար ի մարդու համար մի իր, մի առարկայ, մի խաղալիք, անդէմ, անգոյն, առանց իրաւունքների եւ առանց գիտակցութեան: Իսկ այսօր մի քանի տասնեակ տարիներից յետոյ հազարներով կարելի է համարել հայ մայրեր գիմնազիական միջնակարգ դպրոցի դասընթացն աւարտած, գիտութեան պաշարով, ազատ նախապաշարմունքների կապանքներից. տասնեակ հազարաւոր օրիորդներ կարելի է համարել, որոնք գիտութիւն են սովորում դրպրոցներում,—կին - ուսուցիչ, կին - բժիշկ, մանկաբարձուհիք, անկախ իրանց իսկ ըրքով, իրանց ստացած գիտութեամբ, իրանց աշխատանքով ապրող կին-մարդիկ: Եւ այդ բոլորին որքան ծառայութիւն է տրել այն գիմնազիան, որ գտնւում էր Հանգուցեալ Մեծ Իշխանուհի Օլգա Փէօդորովնայի հովանաւորութեան տակ: Որքան աղքատ թշւառ աշակերտներ ստանալով այդտեղ եւ միւս դպրոցներում՝ իրանց ուսումը դարձել են կեանքի մէջ անկախ աշխատաւորներ յարգանք զգալով դէպի իրանց անձնաւորութիւնը: Հանգուցեալ Մեծ Իշխանուհին կատարեալ մայրական խնամքով էր վերաբերւում՝ թէ Թիֆլիսի իգական Գիմնազիոնին եւ թէ միւս բազմաթիւ Կովկասեան օրիորդական դպրոցներին, որոնք գտնւում էին նրա Բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ: Հանգուցեալ Մեծ Իշխանուհին թէ Թիֆլիսում եւ Կովկասեան զանազան քաղաքներում՝ հաստատեց բարեգործական ընկերութիւններ, որոնց նպաստաւոն էր պետական իգական դպրոցներում՝ սովորող աղքատ օրիորդներին նիւթապէս օգնել:

Մեծ իշխանուհի Օլգա Փէօդորովնան իբրեւ մեր երկրի Բարձրագոյն վարչական անձի՝ Փոխարքայի ամուսին, միշտ եղել է իբրեւ գթառատ միջնորդ իր ամուսնու մօտ բոլոր թշւառների եւ արդարադատութիւն փնտրողների համար: Զրկւած, թշնամանւած, հալածւած, հարստահարւած կանայք միշտ դիմել են Օլգա Փէօդորովնայի օգնութեան եւ նրա բարի խօսքին եւ ամենքն ըստացել են մխիթարութիւն: Վերջին Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ հանգուցեալ Մեծ իշխանուհին վիրաւորւած զինւորներին եւ սպաներին տեղաւորել էր իր Բօրժոմի ամարանոցի սենեակներում, որ ինքն անձամբ կարողանայ հսկել նրանց խնամատարութեան վրայ: Մի խօսքով կովկասցիք նրա վրայ սովորել էին նայել ինչպէս բարի մօր վրայ եւ որքան մենք տեղեկութիւն ունինք, նոյն աչքով նայում էին եւ նրա վրայ եւ Պետերբուրգում՝ Բարձրագոյն շրջաններում: Ուստի հասկանալի է այն անկեղծ տխրութիւնը, որ պէտք է համակէ ամենքին, որոնք ծանօթ են այդ ընդ միշտ հեռացող ազնիւ ոգու հետ:

ՎԵՐՋԻՆ ՎԷՐՔԵՐ

ԺԲ.

ԱՐԾԻՒ ԲՈՑՆ ԸՆ

Երիցմանկանց վանքի արեւմտեան կողմում, Թրղի գետի մէջն է թափւում մի առւակ, որ թէեւ փոքր է, բայց մեծ ձայն ունի և բնութիւնից ստացել է մի ահագին ձոր իր ճանապարհի համար: Այդ ձորը, խառնւելով Թրղի գետի նոյնպէս ահագին և խոր ձորի հետ, մէջ տեղ թողնում է մի եռանկիւնաձև բարձրութիւն, որի կողերը բնական պատերի պէս երկու ձորերի յատակից դէպի վեր են ցցւում, նեղ և փոքրիկ գագաթը երեք կողմից բոլորովին անմատչելի դարձնում: Իսկ չորրորդ կողմից, արեւելքից, այդ եռանկիւնին աստիճանաբար բարձրանալով միանում է այն տեղի հետ, ուր Երիցմանկանց վանքն է կանգնած:

Երկու ահռելի ձորերի մէջ խրւած այդ եռանկիւնաձև բարձրութիւնը չրջապատւած էր հաստ ու սինդ պատերով, որոնց ատամնաւոր վերջաւորութիւնները ցոյց էին տալիս, որ դա մի բերդ է: Խոր ձորից այդ բերդը բոլորովին նման էր մի մեծ բոյնի, պարիսպները զարմանալի համաձակութեամբ կոկցրած էին ուղղաձիգ կողերի ծայրերին, այնպէս որ պարսպից իջնողը պիտի ուղղակի ձորերի մէջն ընկնէր, որովհետև ոտ դնելու տեղ անգամ չէր դանիլ պարսպի տակ: Զարմանալի բերդը, որ տեսնողին վախեցնում էր իր դոռոզ դիրքով, իր ծուռ ու մուռ պատերի մէջ պահում էր չորս տուն: Նրա դռները միշտ փակւած էին, իսկ դէպի Երիցմանկանց վանքը դարձրած բարձր դիտանոցի վրայ հսկում էր պահապանը:

Արեգակը բաւական բարձրացել էր, երբ այդ բերդի դիմացը դուրս եկաւ գիժ վարդապետը: Թարթար գետից,

այն իսկ տեղից, ուր նրան թուրքերը թողեցին, նրան և Սանամին այստեղ էր բերել մի սալաավելի ճանապարհ, որ թանձր ծմակի մէջ հազար ու մի կերպ ոլորելով, ձորերը, անմատչելի կապեր և չունչ սպառող լանջիվերեր կարելով, հարիւր ու մի տեղ կորչելով ու նորից յայտնուելով, վերջապէս, հասնում էր այդ երկու ձորերի խառնուածքին։ Երկար, յոգնեցուցիչ ճանապարհ էր, բայց նրանք չուտ էին անցել այդ տարածութիւնը։ Սանամը բոլորովին փչրուել էր և լուռ արտասուք էր թափում. յետ մնալ, քիչ հանգստանալ չէր կարողանում։ Վարդապետը Թարթարի ափից սկսած ոչ միայն չէր չալակել նրան, այլ և ձեռքից չէր բռնել։ Այդ բաւական չէր. Թարթարն անցնելը, կարծես, վոխել էր նրան, ուրիշ մարդ չինել. նա այժմ մտախոհ էր, դնում էր արագ, չէր խօսում և կարծես մոռացել էր իր Սանամին։ Երբ վերջինս քիչ ու քիչ ուշանում էր, նա յետ էր նայում և նրա ծանր ու մռայլ հայեացքն այնպէս էր ներգործում թուլացած կնոջ վրայ, որ նա վերջին ոյժերը վատնելով, առաջ էր մղւում չընչացասլաւ։ Վարդապետը մինչև անգամ ուշադրութիւն չէր դարձնում, որ իր «երեխան» բոբիկ է և նրա մերկ ոտները ծւատել էին սուր քարերը։

Նրանք անցան բերդի հիւսիսային կողմի ձորը և այդտեղից բարձրացան դէպի դռները։

—Ջալաղան, դոչեց հայր սուրբը։

Պարսպի գլխից մի մարդ հարցրեց.

—Ո՞վ ես։

—Նո՛ր ես կուրացել, պատասխանեց վարդապետը, —ես կասեմ Իւզբաչուն, որ քո ջուխտ աչքը հանէ. դու հեռուից պիտի տեսնէիր ինձ։

—Լա՛ւ, հայր սուրբ, աջիդ մեռնեմ, ներիր, ասաց պահապանը դռները բանալով և վարդապետի աջը համբուրեց։

—Օրհնեալ լինիս։ Իւզբաչին տա՞ն է։

—Տանն է, հայր սուրբ, Աբգումանն էլ նոր եկաւ։

Նորեկները մտան մի ընդարձակ սենեակ, ուր մի քանի մարդիկ նստած խօսում էին։ Դրանցից մէկը, մի կարճլիկ արարած, տեղից վեր թռաւ, վերցրեց իր վահանը և համբուրեց վարդապետի աջը։ Այդ մարդը հագած էր չինական պարզ հագուստ, ունէր մի փոքրիկ և լայն դէմք, որ համարեա ամբողջովին բռնած էր կարճլիկ և թուխ միրուքով. մազերով չրջապատած մի զոյգ խոշոր աչքերը լայն բացած էին և փայլում էին։

—Բարի լինի գալուստդ, հայր սուրբ, ասաց այդ մարդը մի բարակ ձայնով, որ կատուի ձայնին էր նման։

—Օրհնեալ լինիս, Ջալաղան-Իւզբաչի։ Երեխայիս ս եղաւորիր, մեր Սանամն է, յոգնել է, չարչարուել։

Իւզբաչին նրան ուղարկեց միւս սենեակը։

—Ես չէի ասում թէ Թող դա էլ մեզ հետ գայ, հարցրեց Թիւլի-Աբգումանը, որ նստած էր Աւերաքօղու հետ.— մենք չատ լաւ եկանք. թուրքերը չերևացին, երևի, իսկի տեղներիցը չեն չարժուել, իմացել են որ փախել են, պրծել։

—Հա՛, իմացել են, ինչպէ՞ս չէ, ասաց վարդապետը հեգնօրէն և նստեց նրա մօտ։—Թուրքերը մինչև Թարթար եկան իմ հետից։ Եթէ ես չըոտանէի Սանամին, նրանք քո հետիցը պիտի գային և մինչև այստեղ ձեզ հանգստութիւն չէին տալ։ Ես գողացայ նրանց խելքը, բոլորին իմ հետից բերել տւի։ Բայց չըգիտես, Աբգուման, քո կարմիր արևը վկայ, եթէ հեռուից տեսնէիր, ծիծաղից կըմեռնէիր։ Գալիս են, գալիս, հա՛, հիմա կըբռնեն. ես էլ խաբում եմ, կանգնում եմ ու իմ դիտացածն եմ անում։ Շատ եմ ծիծաղել. այդ անօբէններին այդպէս պիտի չարչարես. պիտի ցոյց տաս, թէ մարդիկ չեն։ Եւ ցոյց տւի։

Նա կարճ կերպով պատմեց իր ճանապարհորդութիւնը։

—Լա՛ւ է, ասացին ամենքը,—մի օրդ հազար, հայր սուրբ։

—Բայց էլ ինչու ես Սանամին քո երեխադ անւանում, երբ այդքան չարչարել ես, հարցրեց Աբգումանը։

—Ես երեխայ չեմ, Աբգուման, ես քեզանից լաւ եմ հասկանում և եթէ իմ ձեռքը մի երեխայ տան, ես լաւ կըսանեմ, այնպէս կըպահեմ, որ նա լաց չի լինիլ։ Ես իմանում էի, թէ որտեղ պիտի սիրտ տամ նրան և սիրտ էի տալիս, չէի վախեցնում։ Իսկ չարչարուիլը վատ չէ։ Թող մի քիչ էլ խրատւի։ Ես նրան դիտմամբ քարչ էի տալիս այս սարերով, ծմակներով, որ նա տանջուի, իմանայ թէ իւղը մածնիցն է դուրս գալիս։ Թէ չէ... Այս բոլորի պատճառը նա չէ։ Ի՞նչ էր լսել. մարդը, չների մէկը եկել է, կանչում է, նա հարկադրում է, որ դուռը բաց անեն։ Չիմա թէ այս գիշեր էլ նոյնը պատահէ. եթէ Սահականը գայ, վանքի մօտից կանչէ, էլի պիտի դուռը բաց անել տայ ու Ջալաղան-Իւզբաչու տունը քանդէ։

—Բօ-բօ, այդպիսի մարդուն չարժէ պահել, խօսեց Իւզբաչին։

—Դու ինչ կանէիր։

—Ես, հայր սուրբ, նրա ձեռքից կըբռնէի ու կըշպրտէի Թրղու ձորը։ Աբգումանից լսեցի Ջրաբերդի պատմութիւնը. ինչ ասեմ, եթէ այնտեղ լինէի, իմ ձեռքով դատաստան կանէի։

—Այդպէս էլ հարկաւոր էր, վրայ բերաւ Աւերաքօղին։

—Հա՛, կուրանամ քեզ համար, Աւերաքօղի, դու էլ ատամ ես կրճտացնում նրա վրայ, ասաց վարդապետը։—Չէ, որդիք, ծնկանս վրայ պահած երեխան է, ես նրան չատ եմ սիրում և առաջ նրան ազատեցի թուրքերի ձեռքից։ Ճչմարիտն ասեմ, թէկուզ մի քիչ պատժեցի, բայց հիմա չատ եմ փոչմանում։ Վնաս չունի, Թող սովորէ, երես առած երեխան էլ մի բանի նման չէ։ Տէ՛ս, Ջալաղան, նրան ձեռք տւողը ինձանից յաւիտեան չի պրծնիլ։

—Խօսք չըկայ, պատասխանեց նա.—մեր հիւրն է. խելօք մնայ, մազն էլ չի ծռւիլ։ Դուցէ Մռւաւի արծիւներից մէկը նրան վախցնէ, այդ չըգիտեմ. բայց մարդ... չի կարող մօտենալ։

Այդ միջոցին մի կին փայտի երկար խոնչայի վրայ ներս բերաւ մի քանի հատ գարի հաց, մի կտոր չոր պանիր և խաչած միս։ Դնելով խոնչան հիւրերի առաջ, կինը մատների ծայրով բռնեց իր քիթկալից, որպէս թէ օտար տղամարդից քաչելով ասաց.

—Ձեզ մատաղ, լաւ ժամանակ չէք պատահել, եղածն այդ է, երեխաներին այնտեղ կերակրեցի, այդ էլ ձեր բաժինն է։

Նա կռնատակից հանեց ու մէջ տեղ դրաւ մի փոքրիկ կաւէ տաման, որ լիքն էր օղիով։

—Օրհնեալ լինիս, Ամարնան, օրհնեալ լինիս, ասաց վարդապետը, երկու մատով թաչակնքեց հացը և իսկոյն սկսեց միսը կտտրել։

—Հայր սուրբ, լաւ կերէք, վայրի այծի միս է, երկկն են բերել մեր որսորդները։ Օղին մոռացար, հայր սուրբ. օղի խմիր, որ սխորժակդ բացւի։

Հայր սուրբը գլխով բացասական նշան արաւ, թէև



Պուտր դեպի Բաթումի

Նաֆթի լիճ, Բաքվեան տապ

Բաքվի նավթահորեր

այդ կինը երկար թախանձում էր օղին խմել, բայց նա մի խօսք անգամ չասելով՝ ուտում էր միսը։

—Տուր ինձ, ասաց Արզումանը.—նա առանց դրան էլ գիժ է։

—Խելօք չանիդ մատաղ, Թիւլի-Արզուման, ծիծաղեց հայը սուրբը և աջ ձեռքով գրկեց նրա մէջքը.—Ղարաբաղ, Գանձակ, Իրան խելօքութեանդ վրայ զարմացել են։ Պահ, պահ... դու հրեշտակ պիտի ծնուէիր, բայց սխալմամբ մարդ ես ծնել։

Արզումանը ծիծաղելով դուրս եկաւ նրա գըրկից և դառնալով դէպի կինը, ասաց.

—Ամարնան-աքիր, առաջին բաժակը քոնն է. մի լաւ օրհնիր մեզ. թէև ընկերս վարդապետ է և ամեն անգամ օրհնում է մեզ, բայց քո օրհնութիւնն ուրիշ է։

Նա ընդունեց օղին, օրհնեց բոլորին, յայտնեց որ հայր սուրբի ծառան է և խոկոյն դատարկեց բաժակը։

Ամարնանը մի հատն էր իր սեռից, որ ապրում էր այս ամրոցում։ Նա Զալազան-Իւզբաչու կնիկն էր, բայց իր ամուսնուց մեծ էր երևում։ Դէմքը նիհար, բայց դեղնագոյն էր, սպաւսպական կնճիռներով ծածկւած և չատ տգեղ. բերանը մեծ էր և չրթունքներն այնքան հաստ, որ միշտ երևում էր նրա մի մեծ և դեղին ատամը, որ բերանի աջ անկիւնումն էր նստած։ Թէև կաղ էլ էր, բայց խիստ արագաչարժ էր և ժիր. մի կարճ միջոցում նա չորս թէ հինգ անգամ դուրս գնաց ու էլի ներս մըտաւ, այս ու այն անկիւնն ընկաւ և չարունակ խօսում էր, կարգադրում։ Բերդում, ինչպէս երևում էր, առանց նրան ոչինչ չէր գլուխ գալիս. մինչև անգամ ջրի գնալու համար էլ նրանից էին հարցնում։

Վարդապետը, որ գլուխը կախ արած ուտում էր, յանկարծ դէն գցեց ձեռքին բռնած հացի կտորը և աչք ու յօնք չարժելով իմաց արեց որ ջուր բերեն, մատով ցոյց տալով որ հացը կոկորդումն է մնացել։

—Վա՛յ, կուրանամ, հայր սուրբ, գոչեց Ամարնանը, խոկոյն ջրի ամանը նրան հասցնելով։

Վարդապետը խմեց ջուրը, որի օգնութեամբ երկար աշխատելով հազիւ կարողացաւ հացի պատառը կուլ տալ։

—Խեղդւում էի, ասաց նա հանգստանալով. ծո, այնպէս մեխւել էր, որ հոգիս դուրս էր գալիս։ Է՜հ, ձեր ապրուստը... սա է կերածներդ։

—Շատ անգամ այդ էլ չի հաբւում, խօսեց Իւզբաչին։ Իսկ Ամարնանը ասելացրեց.

—Երեխերքը համարեա միշտ մսով են կերակրւում. միսը բերում են, խորոված, ուտում են կէսը հում, կէսը խորոված. կուրանամ ես նրանց համար. ինչ անեն, ոչ վար ունինք, ոչ ցանք։

—Երեխերքդ չեն ասէլանում, Ամարնան։

—Շէն մնայ Աստուծու տունը, ատան հոգի կան, այս երկու չաբթում մէկն էլ եկել է. Խոսրովն է, դու ճանաչում ես, Արզուման. եկաւ չոքէչոք ոտներս ընկաւ, թողութիւն խնդրեց, է՛հ, սխալւել էր, ինքնագլուխ հովի աղջիկը փախցրել էր. ես նրա աչքը հանել էի ուզում, ասում էի՝ անօրէն թուրքի աղջկայ հետ ինչ գործ ունիս. որքան էլ լաւ լինի, դեղեցիկ երևայ, դարձեալ թուրքի աղջիկ է։ Նա ինչ չըլսեց ու մենք նրան դուրս արինք։ Հիմա եկել է, թողութիւն է խնդրում։ Երեխերքն էլ համաձայնեցան, որ նա նորից եղբայրանայ։

Ամարնանը ինքը երեխայ չունէր։ Երեխայ էր անւանում բերդում ապրող մարդկանց, որոնք իրար եղբայր էին անւանում, թէև զանազան տեղերից էին հաւաքւած այդտեղ։ Այդ մարդիկը հայր ու մայր չէին ճանաչում. նրանց հայրը Զալազան-Իւզբաչին էր, մայրը Ամարնանը։ Այդ տեսակ ընկերակցութեան հոգին ինքը, Իւզբաչին էր։ Այդ մարդը մի մուխ և անչայտ անցեալ ունէր։ Թարթարի վերին ափերում տեղաւորւած երկու գիւղերի տանուտէրութեան պաշտօնը երկար կատարելուց յետոյ նա եկել էր այստեղ և հիմնել էր այդ բերդը։ Իր տեղափոխութեան պատճառը նա բացատրում էր նրբանով, որ երկու գիւղերը կամաւոր կերպով գաղթել էին Սևանայ լճի ափերը, ուր և մտել էին թուրք խանի իշխանութեան տակ։ Այդ ամօթալի դործը կատարել էր նրա կամքի հակառակ. ժողովուրդը չէր լսել նրա խրատները, փախել էր իր բնակութեան տեղից, այն պատճառը բերելով, թէ վայրենի գրդերը չատ են յարձակւում, չատ են նեղացնում մարդկանց։ Այդ ճշմարիտ էր, գուրգերը չատ էին դալիս. բայց ինչ կարող էին անել, երբ նրանց դէմ կանգնած էր Զալազան-Իւզբաչին։ Սա ինքն էլ ուրիշ տեղեր էր գնում, աւերում, խլում, տուն բերում։ Ամրողջ չաբաթներով կորչում էր, անյայտանում, չատ հեռու էր փախցնում ասպատակ գուրգերին։ Եւ այնպիսի անուն էր հանել, որ հեռաւոր տեղերից գուրգերի ահագին բազմութիւն գալիս էր այդ յափշտակող հարիւրապետի ոյժը փորձելու համար։ Արիւնարբու վայրենիները չատ մարդ էին կորցնում Իւզբաչու սահմաններում և իրանց վրէժը հանում էին հասարակ ժողովրդից։ Բայց և այդպէս, աւելի օգուտ ատացողը հայերն էին. չատ անգամ նրանք տիրանում էին գրդերի ահագին հօտերին, չատ անգամ նշանաւոր փրկանք էին ատանում մի որ և է նշանաւոր գերի ազատելու համար։ Բայց Ատուծու բարկութիւնը իջել էր ժողովրդի վրայ. նա թուլացաւ, վախից աւազակներից և այդպէս վեր կացաւ, գնաց ուրիշ տեղ բնակութիւն հաստատելու։ Դրանով ժողովուրդն իր Իւզբաչու մէջքը կոտրեց, անունը ցեխի հետ հաւասարացրեց։ Եւ նա եկաւ այս տեղը, չինեց իր բերդը։ Անկախութիւն սիրող մարդը հինգ տարի էր արդէն, որ նստել էր Մուսի անտառների խորքում կորած այդ բարձրութեան գլխին։ Այդ խաուն և թշւառ ժամանակներում միայն այդ մարդն էր ապրում հանգիստ, անհոգ։ Նա իր գլխին էր հաւաքել մի քանի հատ մարդիկ և տիրել էր Թարթարի ձորի մի մեծ մասի վրայ։ Նա մտադրութիւն ունէր այդ անմատչելի ձորերում հիմնել գիւղեր և կառավարել այդ գիւղերը առաջւայ պէս։ Բայց հանգամանքները խիստ անյարմար էին, ժողովուրդը փախչում էր, օր օրի վրայ աղետալի անցքերը բազմանում էին։ Եւ նա հարկադրւած էր սպասել։ Նա չատ լաւ գիտէր, թէ ինչպէս կարող էր մի հանգիստ անկիւն պատրաստել բազմաչարչար ժողովրդի համար։ Եւ նրա արհեստը լոկ սրսորդութիւնը չէր։ Մուսի, կուսական անտառների խորքից նա ցանցեր էր տարածում և բռնում էր բաւականաչափ զոհեր։ Նա երևում էր ամեն տեղ, հասնում էր նշանակած նպատակին և իր մարդկանց հետ այնպէս էր գործում, որ Մուսի անտառները սարսափելի տեղ էին համարւում։ Նեղայրութիւնը մարդկանց աչքին չէր երևում. գործում էր համերաշխ, կատարում էր չատ դժւար բաներ և այդ պատճառով մի աներևոյթ, անխորտակելի ոյժի հռչակ էր ստացել։ Կարծում էին, թէ այդ մարդկանց թիւը չատ մեծ է, թէ դրանք մեծ մեծ խմբերով օր ու գիշեր չրջում են

անտառները։ Միայն մօտիկ, բարեկամ մարդիկ կարող էին մտնել նրա բերդը՝ այդ տեսակ մարդիկն էլ չէին կարող ճիշտ հասկացողութիւն ունենալ բերդում ապրողների թւի մասին, որովհետև դրանք համարեա միշտ բացակայ էին. երեք կամ չորս հոգուց աւել միասին բերդում մնալ չէին կարող։ Վարդապետը այդ իսկ պատճառով չըհաւատաց Ամարնանին, երբ նա ասաց, թէ ընդամենը տասն հատ երեխայ ունի։ Նա չատ լաւ գիտէր, որ այդ մարդկանցից չատ բան իմանալ անկարելի է. կինիկը մարդու չափ խորհրդապահ էր, հասկացող։ Դա էր պահում տունը, դա էր ամենքին մի տեղ հաւաքում։ Ինչ որ ձեռք էր ընկնում, եղբայրութեան սեպհականութիւնն էր. ուտում էին ամենքը մի և նոյն կերակուրը, հաւասար կերպով պարտականութիւն էին կատարում։ Ամեն մէկը իրաւունք ունէր յղնած ժամանակը գլուխը դնել Ամարնանի ծնկան վրայ և քնել, վայելելով նրա մայրական դուրդուրանքը։ Եղբայրների մէջ պատահած վէճը, կռիւը Ամարնանի վճռով պիտի վերջանար։ Վճռողական էր այն երդումը, որ անում էր, Ամարնանի ուսած հայեր, նրա երախտիքի վրայ. և այդ միջոցին չատ անդամ դիմում էր ինքը, Զալազան-Իւզբաչին։ Այդ բոլորը լաւ իմանալով վարդապետը հիացած ասաց.

—Օրհնեալ լինիս դու էլ, քո երեխաներն էլ, Ամարնան։ Աչխատիր որ երեխաներդ չատանան. մեզ հարկաւոր են։ Ո՞ւր են այժմ ճաներդ։

—Երկուսն այստեղ են, մնացածը գնացել են, հայր սուրբ։ Սրեհւանից դէսը լուր չըկայ։ Սրեի, որս չի պատահում։

—Ի՞նչ որս, երկու ոտնանի թէ հասարակ որս։

—Չէ, եղբայր Արզուման, երկու ոտնանին էլ չի երեւում, պատասխանեց Իւզբաչին.—այն վաղ էր, որ էշը կաղ էր։

—Նա տեղը ցոյց կըտամ, վրայ բերաւ հայր սուրբը.—գնա, չատ համեղ եւ պարարտ որս է։

—Ո՞րտեղ է։

—Կաթողիկոսին բռնեցէք. նա մեր տունը քանդեց. նրա մասը խառն է ամեն տեսակ վատութիւնների հետ։ Զրաբերդի յաղթութիւնը նրա պատճառով չէր։

Զալազան-Իւզբաչին և իր կինը իսկոյն պատասխանել չկարողացան։ Երկուսի համար այդ առաջարկութիւնն այնքան անսպասելի էր, որ նրանք սկզբից հանգաքի տեղ ընդունեցին և ծիծաղեցին։ Բայց երբ վարդապետը նոյնը կրկնեց և հաւատացրեց որ հանաք չի անում, մարդ ու կնիկ զարմացած միմեանց երեսին նայեցին, ապա մարդն ասաց ծանր կերպով.

—Այդ ասելու բան չէ, հայր սուրբ։ Ի՞նչպէս կըլինի, մեր վանքին ձեռք տանք։ Դիտէս, որ մի ակընթարթում մեզ բոլորիս այստեղ կուչ կածէ, չի էլ թողնիլ որ չունչ քաշենք։ Մեր վանքի պէս զօրաւոր վանք ամբողջ Զրաբերդում և Խաչէնում չըկայ։

Այդ ասելով, Իւզբաչին ջերմեռանդութեամբ երեսին խաչ հանեց։ Իսկ նրա կինը չարունակեց մարդու խօսքը.

—Մենք վանքի ծառաններն ենք, մենք ինչ չներ ենք, որ նրա մասին ծուռ միտք էլ անենք, հայր սուրբ. այդպիսի խօսքը ինչպէս է բերանդ գալիս։

—Օհօ-հօ, մարդ ու կնիկ քար կծեցին, պատասխանեց հայր սուրբը և ակամայ ծիծաղեց.—ձեզ ոմն է ասում որ վանքին վնասէք. ես ինքս էլ ծառայ եմ վանքին և նրա սրբերին։ Բայց կաթողիկոսը, հոգիս վկայ է, մարդ չէ։ Նա իր հոգին ու մարմինը ծախել է Թուրքի, չէ՛ք տեսնում։

—Չէ, հայր սուրբ, մեղք է։ Եթէ նա վատ մարդ լինէր, մի օր սուրբի մօտ մնալ չէր կարող. սուրբը նրան կուչ կածէր անպատճառ։ Դու հօ դիտես, ես ինչ ասեմ։ Թուրք Ալի-աղան եկաւ վանքը ուխտ, բայց ծուռ միտք ունէր, ուզում էր ոսկի և արծաթի խաչերը դողանայ։ Բայց հէնց այդ միտքն անելիս կուչ եկաւ, կծիկ դառաւ։ Երկու չաբաթ վանքի պատերի տակ քաչքաչեց, վորսող տեաւ, բառաչում էր. հինգ եղն մորթեց, մատաղ արաւ, քիչ լաւացաւ և գնաց իր տունը։ Եւ այնուհետև ամեն տարի ուխտ է գալիս։ Ծառայ եմ մեր վանքին, նա ամեն մարդու չի ընդունում։ Կաթողիկոսը վատ մարդ չէ. երկայն ուսխատմն էլ է պատ պահում, Համբարձմանը թաթախում։

Վարդապետն ու Արզումանը լսում էին Իւզբաչու այդ խօսքերը և թէև աչխատում էին գոնէ դրսից ցոյց տալ, որ լսում են անտարբերութեամբ, բայց երկուսի դէմքերը արտայայտում էին մի տհաճութիւն։ Այդ զգացմունքը աւելի ևս վատացաւ, երբ Ամարնանը սկսեց իր ամուսնու սատը հատատել։ Նա պատմեց, որ կաթողիկոսը սուրբ մարդ էլ է. ինքը, Ամարնանը, տեսել է երազում, թէ ինչպէս երկնքից լոյս էր ծլծլում վանքի վրայ. թէև դիչեր էր, բայց արարած աչխարհ զարթնել էր, թռչունները ծլվլում էին, կովերը բառաչում։ Այդ լոյսի տակ չոքած էր կաթողիկոսը՝ երեսը դէպի երկինք դարձրած։ Այդ երազը նա տեսել էր առաւօտեան սուրբ լոյսին և տեղից վեր էր թռել, գնացել էր վանքը, ուր տեսել էր կաթողիկոսին չոքած խորանի առաջ, երեք մանկունքների դերեզմանի դիմաց, սաղմոսը ձեռքին։ Երբ այդ բոլորը պատմելուց յետոյ Ամարնանը կրկնեց, որ կաթողիկոսի մասին այդպիսի միտք յայտնելը մեղք է, որ նա սուրբ մարդ է, Արզումանը կորցրեց համբերութիւնը և ասաց.

—Մեղք էլ գիտէը, հա՛, արդար մարդիկ էք . . .

Վարդապետը չատսցեց իր ընկերի խօսքը ընդհատել այնպէս, որ ոչ Արզումանը նեղանայ, ոչ էլ Իւզբաչին։

—Ի հարկէ, ասաց նա.—մեղք է, որդիք, որ գնում ենք, մարդ սպանում, կողոպտում, անմեղ արիւն թափում։ Զալազան-Իւզբաչին ուրիչ արհեստ չունի. վար ու ցանք անել, եղն ու տաւար պահել չըգիտէ։ Նա չատ երեխաների անհայր ու անմայր է թողել։ Այդ նրա գործն է, բայց մի բան էլ կայ, Զրաբերդում մի մարդ կայ, անունը Թիւլի-Արզուման. եթէ նա երդումով հաւատացնէ թէ ինքը չատ արդար մարդ է, չըհաւատաք։

—Հա՛, հայր սուրբ, կայ ասեմ, ընդհատեց Իւզբաչին։—Մերն էլ այդ է։ Մենք էլ Աստուծու ստեղծած մարդիկ ենք։ Գայլը որ կայ, ինչ արհեստ ունի. չէ՞ որ սպանում է, ուտում, կոտորում. բայց գայլն էլ Աստուած ունի, եթէ չունենար, նրա ճանդը խակի մի բան չէր ընկնիլ. գազան, թռչուն, Աստուծու տակ եղած ամեն մի չունչ իր բերանի ուտելին, իր ռուզին ունի։ Մենք էլ ունինք։ Ես որ գնում եմ ծմակը, առաջ երեսս դէպի վանքն եմ դարձնում, երեսս խաչակնքում եմ և ասում. «Տէր Աստուած, դու հասցնես»։ Աստուած հասցնում է, ես էլ ուտում եմ։

Հ Յ Օ

[Կըշարունակի]

ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՏ

Վէպ ութկին Լոդրէն—Ա. Գիլէսի

(Շարունակութիւն)

Նապոլէոնի սովեանիկի խելքը գլուխն էին թէ չէ, նա խոյն մտածեց գնալ Աբլայն մօր մօտ, որ միշտ նրա մտերիմ բարեկամն է եղել և խնդրել նրան իր աղջկան մտքին պիրտպետող սարսուռելի մոլորութիւնը մի կերպ ցրուել, բայց մի քիչ մտածելուց յետոյ, նրան յաւուիկ ամօթխածութիւնով նա չընդհատեց որ և է մարդու հատատալ իր գաղտնիքը, հաղորդել այն դառն վիրաւորանքը, որն ինքը կրել էր։ Նա սկսեց յուսալ որ հէնց ինքը կարող է խելքի բերել իր հնոջը և նրա մէջ պատրաստանալ զգացմունք զարթեցնել։ Այդ նամակը նրան ուրիշն է թելադրել—մտածում էր նա.—նրա մէջ արտայայտած անբարոյական սկզբունքները և քանդող, քայքայող ձգտումները նրան նեղնչած են դրսից—նա գտնել է այն չար և անբարոյական մարդու գաղանի, կողտաբեր ազդեցութեան տակ. բայց նրա հետ դեռ կարելի է խօսել, նրան կարելի է համոզել և ազատել Թովիչի ճանկերից...

Նա զգում էր որ ամենից լաւն է որ ինքն գնայ անձամբ իր հնոջ մօտ և աշխատի անձամբ ազդել նրա վրայ, բայց չկարողացաւ իրան կտրել, նա սարսափում էր ամեն տեսակ անհաճոյ տեսարաններից ու չէր դիմանում զգացմունքների կրքոտ արտայայտութեան և չէր կարող համբերել, որ ուրիշները զբաղւեն նրա անձնական կեանքով։ Իսկ որովհետև բամբասանքն արդէն սկսել էր, ուստի Նրա յանկարծակի գնալը, արձակուրդից մի շաբաթ առաջ, շատ հեշտութեամբ կարող էր առիթ տալ տակից գլխից խօսակցութեան։ Բայց դրանից նա անկարող էր դիմանալ իր հակառակորդի հետ երես առ երես հանդիպելու մտքին. կարելի է հինը սառնութեամբ երեսը կրգարձնի իրանից և պատասխանութիւն կրվինալի այն անպիտանի մօտ։ Նա գիտէր որ եթէ իր հինն իր հետ սառնութեամբ վարւի, այն ժամանակին ինքն անկարող կրլինի նրա հետ անկեղծօրէն խօսել, մինչդեռ միայն այդ ճանապարհով նա կարող է Աբլայի սիրտը շարժել։ Նա ճարտասանական չէր, ճոռոմաբան չէր, չէր կարող ոչ լուսի պէս պարզ ճշմարտութիւնն ասպացուցանել և ոչ սեւն սպիտակի վրայ։ Նա մտածում էր որ իր անձնական վարմունքի մի քանի չորութիւնները և խստութիւնները, որոնք վակուած մնում էին իր ընտանեկան յարկի տակ, այժմ լոյս աշխարհ դուրս կրգան, երբ նա դուրս գայ իր հնոջ առաջ վիրաւորած զգացմունքով և հպարտութիւնով և իր հակառակորդի մօտ իր ոչնչութիւնը խոստովանելով։

Ո՛չ, աւելի լաւ է գրել. Նամակի մէջ նա կարող է աւելի պաղարիւն և աւելի պարզ կերպով հերքել բոլոր այն ճարտասանական դատողութիւնները և մուրթ թափչքները դէպի ազատութիւն, որոնցով իր հինն աշխատում էր թմրեցնել իր խիղճը։ Նամակի մէջ նա աւելի հեշտութեամբ կարող էր սանձահարել իր հպարտութիւնը և դիմել նրան պաղատելով, որ ճանաչէ իր պարտութիւնները, չերծոնէ այն մարդուն, որ այդպիսի չերմ սիրով կապած է նրան, այն մարդուն, որ կեանքի մէջ այլևս ոչ մի երջանիկ օր չի ունենալու, եթէ միայն այդ դժբաղտութիւնը նրա գլխին գայ։ Նա առանց տատանուելու յիշեց և իր հիւանդութեան մասին, որ վերջին ժամանակներն զգալի կերպով սաստկանում էր։ Իր նամակում պատմեց Աբլային թէ հէնց քիչ ժամանակ առաջ ուզում էր ընկերութիւններից մէկի մէջ «ապահովել» իր կեանքը, իր հնոջ և երեխաների ապագայ բարօրութեան համար, բայց բժիշկները յայտնեցին, որ նա միայն մի քանի տարի է ապրելու, այժմ նա ապաշում է Աբլային՝ այդ մի քանի տարին էլ համբերել։ „Իմ մահուանից յետոյ—գրում էր նա—դու ապատութիւն կրստանաս և կարող ես քո սրտի հաճոյքին հետևել, թէև ես յոյս ունիմ որ աւելի վաղ կը հասցնես թէ չէ կարելի հատատալ մի անկրօն և բարոյական օրէնքներից զուրկ մարդու, որը չէ քաշւում ուրիշի հնոջը շեղել իր պատրաստութիւններից։—Իսկ ինչ վերաբերում է երեխաներին—գրում էր նա նամակի վերջում—ի զուր ես կարծում թէ ես երբ և իցէ թոյլ կրտամ նրանց ենթարկւել նրա ազդեցութեան, որին ես այնպէս խորը և արժանի կերպով արհամարհում եմ։„

Աբլան իր նամակը գրելուց յետոյ, մինչև Նապոլէոնի սովեանիկից պատասխան ստանալը երկար բոլորովին հեռու էր պահում Բերնսօնից։ Նրանք այլևս ոչ նաւակի վրայ և ոչ ոտով զբօսանք չէին գնում. հանդիպում էին միայն կարճ ժամանակով և այն էլ ուրիշների ներկայութեամբ, ճաշի և ընթրիքի ժամանակ։

Կէսօրից յետոյ Նապոլէոնի սովեանիկի նամակն ստանալով, Աբլան նկատեց որ Բերնսօնը յետ և առաջ մաղ է գալիս իր տան առաջ։ Նա նկատել էր որ նամակաբերը մտաւ Աբլայի մօտ ու անհամբերութիւնից տանջւելով սպասում էր նմանալ նամակի բովանդակութիւնը։ Վերջապէս վոքրիկ էմիլը վազեց նրա մօտ և ասաց որ մայրիկն ուզում է նրան տեսնել։ Բերնսօնն խոյն ներս գնաց։ Աբլան նստած էր դիւանի անկիւնում, գլուխը ցած ձգած և ձեռքերը կրծքի վրայ խաչաձև դարսած։ Երբ Բերնսօնը մտաւ, նա մի քիչ բարձրացրեց գլուխը և վերցնելով իր ծնկների վրայ բաց ընկած նամակը՝ մեկնեց Բերնսօնին, վերջինս առաւ նամակը, առաջ մի աչքի անցրեց և յետոյ սկսեց կարդալ նրան և կրկին կարդալ, կարծես չըհասկանալով նրա բովանդակութիւնը։

Վերջապէս նա հասկացաւ. նամակը գրաւ նրա առաջի սեղանի վրայ և հարցրեց կարճ ու կարուկ.—„Ցետո՞յ։“

Աբլան քիչ բարձրացաւ տեղից և նայեց նրա վրայ աղաչաստ-քով լի աչքերով.—„Ես չեմ կարող, ներեցէք ինձ Բերնսօն, չեմ կարող ես այսպիսի մի անօտահման գժբաղտութեան մէջ ձգել այն մարդուն, որ ինձ այսքան սիրում է„։

Բերնսօնը յետ մղեց դէպի նրան ուղղած ձեռքերը, մի կողմ շպրտեց իր ոտքերի տակ ընկնող աթոռը և շուռ եկաւ որ դուրս գնայ։

—Բերնսօն, գոչեց Աբլան, տեղից վեր թռչելով։ Ի՞նչ էք անում։ Դուք բացարձակ հեռանում էք ինձնից՝ այն ժամանակ, երբ ես անչափ կարօտ եմ մխիթարութեան։

—Ի՞նչպէս, դուք կամենում էք, որ ես մնամ և դեռ ձեզ մխիթարեմ էլ։ Այդ վատ չէ, ճշմարիտ։ Կին—մարդ—սրտեակաև, այսպէս չէ։ Ուրեմն դուք ցանկանում էք որ մենք երեքով մնասկն սպրինք։ Դուք ուրեմն բաժանում էք ձեզ նմ և նրա մէջ, իսկ երբ նա կրմեռնի, ինչպէս մենք «յուսով» ենք, այն ժամանակ դուք ամբողջապէս նմա կրլինէք, այն էլ եթէ վոշմանած չըլինէք... Այո, ճիշտ այդպիսի և դրա նման մի առաջարկութիւն է անում նա ձեզ, իսկ դուք ձեր պատրաստութիւնն էք համարում ընդունել։ Այսինքն նա ցանկանում է որ մենք երկուսս միա-

ԱՆԳՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿԻՐ

Չերքեզական ձի

Բաթում-Ափոն

սին ընկած լինինք ձեր ոտքերի առաջ, բայց միևնոյն ժամանակ նա ոչինչ արգելք չէ գտնում որ դուք ձեզ երկու բաժին անէք՝ մեր երկուսի մէջ.—առաջինն տարինները նրան, իսկ մնացեալները ինձ. Հշմարիտ, մեծ առատաձեռնութիւն է։ Նրա հետ մնալով այդ տարինները, դուք կըպահպանէք ձեր հասարակական դիրքը, կըժառանգէք նրա կարողութիւնը և յետոյ այդպիսի չարաչար ձևով ստացած ժառանգութիւնը կըբերէք ինձ մօտ երբև „բաժինք„։ Սրանից լաւ էլ ինչ կարելի է մտածել։ Վա՜հ։ Եւ միթէ մեծ անխոհեմութիւն չի լինի իմ կողմից, եթէ ես չըհեռանամ ձեզանից մի քանի տարով և ձեզ հնազանդութիւնն չըտամ այդ բոլոր առաքինի գործերը կատարելու...Իսկ թէ այդ բոլորը ձեռք է բերւում ձեր կանացի պատուոյ գնովը—և հարկէ չնմարութիւն կըլինէր դրան մեծ նշանակութիւն տալ—վերջացրեց Բերնսօնը իր դառն հեգնութիւնը։

—Դուք ինքներդ լաւ հասկանում էք թէ ինչպէս էք Հշմարտութիւնը աղաւաղում, պատասխանեց Արլան։—Նա զգում էր որ ամեն բան նրա սրտի և մտքի մէջ խառնւում էր իրար և որ ինքը չէ կարողանում գլուխ դուրս բերել Հշմարտութեան և սուտ այն խառնուրդից, որի մէջ խրւած է։—Դուք շատ լաւ գիտէք որ եթէ ես վերադառնամ իմ մարդու մօտ, չեմ անիլ այդ իմ անձնական շահերի համար, որոնց վրայ դուք այնքան կրպատուելիութեամբ ակնարկում էք, այլ նրա համար՝ որ հակառակ դէպքում ինձ կըճնշի և Հ՛ոչնչացնի խղճի խայթը։

—Ասենք դրանով գործի դրութիւնը չէ փոխւում. յամենայն դէպս դուք ձեզ ծախում էք.—պատասխանութիւնը միայն նորանումն է որ, այդ դէպքում, դուք փողի փոխարէն ստանում էք հասարակական դիրք կամ այն, ինչ որ դուք անւանում էք հանգիստ խղճ—այստեղ զանազանութիւնը շատ փոքր է։ Խնդրի գլխաւոր էութիւնը նրա մէջն է որ դուք համաձայնւում էք Թողնել այն մարդուն, որին դուք սիրում էք և գիտակցաբար ծախել ձեզ միւսին։ Եւ դուք երևակայում էք, որ ես այդ բոլորից յետոյ համբերութեամբ պէտք է սպասէմ այն օրւան, երբ դուք կազատւէք և կը վերադառնաք ինձ մօտ։ Բայց դուք սխալւում էք.—եթէ դուք վերադառնաք ձեր մարդու մօտ, դուք իմ աչքում կըդառնաք ընկած կին, իսկ այդպիսի կնոջ ես չեմ կարող սիրել,—դեռ այդ վիճակին չեմ հասել։ Եւ, ինչպէս նա գրում է, Թէպէտ ես ոչ կրօնուհի, ոչ բարոյական կանոններ, բայց երբէք չէի կարող այդպիսի մի սուրբ վարմունք կատարել ինչպէս նա է ուզում անել, ես չէի պահել իմ կողքին այն կնոջը, որ ինձ էլ աւելի չէ սիրում։ Եթէ իմ կինս ինձ խոստովանէր որ սիրում է ուրիշին և յետոյ ծնկաչոք ինձ պաղատէր որ ես Թոյլ տամ իրան ապրել ինձ հետ, ես նրան չեմ կըներէի ինձնից ամենախորին արհամարհանքով. այդպիսի կինը...

—Դադարեցէք այդպիսի սարսափելի բաներ խօսելուց, դուք ինձ կատաղեցնում էք։ Իմ գլուխս պարտւում է։ Այն, ինչ որ ես մանկութիւնից համարել եմ պարտաւորութիւն, դուք անւանում էք—յանցանք, իսկ այն ինչ որ ամենքը յանցանք են համարում, դուք անւանում էք—պարտաւորութիւն։ Ա՛խ, Տէր Աստուած. ո՞վ է Հշմարիտը և ո՞րտեղ է սուտը. դրանցից մէկի կամ միւսի մէջ պէտք է լինի նա։

—Ո՛ր սրտիդ հարցրու, ասաց Նա քնքշութեամբ և նրան ձգեց դէպի նրան։ Միայն քո սիրտը կարող է քեզ Հշմարտն ասել։ Երևակայիր միայն Թէ դուրը բացւում է և քո մարդդ մտնում է որպէս զի քեզ տանի իր տունը ինչպէս իր կնոջը.—Նա համաձայն է իրաւունքով պէտք է համբուրի քո շրթունքները, որ ես երբէք չեմ համարձակւել անելու—նա քեզանից կըպահանջէ սիրոյ բոլոր այն ապացոյցները, որոնք ապնիւ կինը կարող է տալ միայն սիրած մարդուն. երևակայիր միայն որ Նա գայ հէնց այս րոպէին և խլէ քեզ իմ գրկից։

Արլայի աչքերը լայնացան և նրանց մէջ փայլեց մի երկիւղալի արտայայտութիւն, կարծես Թէ նա տեսնում էր իր առաջ կանգնած մարդուն, որն ուժով նրան ուզում էր իր մօտ վերադարձնել։ Նա իր աչքերը ծածկեց, իջեցնելով գլուխը Բերնսօնի ուսերի վրայ ու շշնջաց. «վախչենք միասին... ես չեմ կարող... չեմ կարող, վախչենք»։

—Արլայի Նամակը--որ Նա գրեց Նադվօրնի սօվետնիկին—արտայայտում էր նորին վրդովմունք և անխախտելի վճռողականութիւն։ «Ինձ ծայրահեղութեան մի հասցնիլ, գրում էր Նա, մի մերժիր իմ ազատութիւնը. դու չես կարող երևակայել Թէ ինչ հետևանքներ կառաջացնէ քո մերժումը։ Աշխարհիս վրայ ոչինչ չէ կարող ինձ հարկադրել յետ կանգնել այն մարդուց, որին ես սիրում եմ.—լսո՞ւմ ես—Ոչինչ։ Դու չես կարող ինձ հարկադրել՝ քեզ մօտ վերադառնալ. ես աւելի չօժարութեամբ կըհամաձայնեմ իմ կեանքի մնացած օրերն անցկացնել աքսորանքի մէջ՝ երբև յանցաւոր։ Մերժելով իմ ազատարգանքը, դու միայն ինձ կըհարկադրես ապօրինի կերպով կապւել Բերնսօնի հետ և դառնալ ուշ Թէ Նրա կինը, այլ Նրա սիրեկանը։ Մինչև անգամ քո այդ սպառնալիքը՝ Թէ դու ինձ կըբաժանես իմ երեխաներից, չէ կարող ինձ կանգնեցնել. վերջապէս՝ դու չես էլ կարող այդ անել, իմ երեխաները և ես շատ սերտ ենք կապւած միմեանց հետ և ոչ ոք չէ կարող նրանց սիրտը կտրել ինձնից։ Սպիտակքէթն իմ պատճէնն է, Նա ստեղծած է որ ինձ Նման շատ տանջւի և շատ սիրի և Նա շուտով կըհասկանայ Աստուծոյ խօսքը Թէ—ով շատ է տանջւում, նրան էլ շատ է նեղւում։ Ես հասկանում եմ որ շատ վատ եմ վարւում քո վերաբերութեամբ, բայց ոչ Թէ այն պատճառով որ այժմ Թողնում եմ քեզ, այլ այն պատճառով որ երբէք ես քո կինդ չեմ եղել, բայց այդ մեղաւորութիւնը ես կարող եմ ուղղել. իսկ ինչ որ արդէն պատահեց, նրանից յետոյ այլ ևս ես չեմ կարող քեզ հրջանկացնել, եթէ մինչև անգամ համաձայնեմ սիրտս կրծքիցս պոկել, դուրս շըպըրտել, որ նրա մէջն զգացմունքները քեզ չըվիրաւորեն։ Էլ աւելի ոյժ չունիմ գրելու։ Ներիր ինձ.—համբուրւում եմ քո ձեռներդ և չնորհակալ եմ քո բարութեան համար, որ մնայ ցոյց ես տալ ինձ»։

Դեռ այս Նամակը չտատացած՝ Էրնն արդէն յոյսը կտրել էր։ Առաջ Նա կարծում էր Թէ Արլան կըհրաժարւի իր մտադրութիւնից, բայց երբ իր Նամակի մէջ Նա իր կնոջ առաջ Թափեց իր բոլոր Հարատարախօսութեան պաշարը, բոլոր այն պատճառաբանութիւնները, որ կարող էր առաջ բերել իր կնոջ վրան ազդելու նպատակով, երբ այդ բոլորը պրծաւ և Նորից կարդաց, մնանգամայն հասկացաւ Թէ որքան լի գուր են իր բոլոր ջանքերը։ Արլայի պէս կինը կը վճռէր վատ վարմունք կատարել միայն անխուսափելի ոյժի ազդեցութեան տակ. Էրնն Արլայի Նամակը կարդաց մեծ հանգստութեամբ, զգալով սրտում բԹացած և անյուսալի վիշտ, որը մենք զգում ենք, երբ քամելով մեր բոլոր արտասուքը սիրած մարդու մահուան

անկողնի վրայ, սպասում ենք որ դադարի խուլը ծածկել և մեր աչքից չսպրեան անհետացնեն մեր թանգագին մեռելի դէմքը։

Արլայի մայրն, տատակի սովետնիկուհին, մի օր յետոյ աղջկանից երկար նամակ ստացաւ, որի մէջ Արլան ամեն բան պատմում էր. այդ պատմութիւնը շատ վըշտացրեց պառաւին, որը Էրնին սիրում էր ինչպէս իր որդուն և Ներողութեան համար լոսաք չէր կարողանում գտնել իր աղջկայ վարմունքի մասին. Նրա աչքում Արլայի արածն աններելի յանցանք էր։ Նա քաջութիւն չունեցաւ վեհայի մօտ գնալու, թէև և սրտէ ցանկանում էր Նրան տեսնել, գրկել և Նրա հետ միասին ողբալ. այնու ամենայնիւ չկարողացաւ վճռել գնալ Նրա մօտ։ Արդեօք վեհան, իրաւամբ, մօրն էլ պատասխանատու չի համարիլ աղջկայ վարմունքի համար։ Ի՞նչ կարող է նա ասել իր աղջկան արդարացնելու համար, բայց միևնոյն ժամանակ չի՞ որ էլի Նա իր զաւակն էր և Նա սիրտ չէր անում պատասխանել լոսաքերով այն ծանր դատապարտութիւնը, որին Նա մտքում հնձարկում էր Արլային։

Միւս կողմից էլ Նադեժդնի սովետնիկն այդ օրերը չտիապանց ցանկանում էր տեսնել իր մտերիմ բարեկամի, իր զօքանչի հետ, բայց չէր վճռում Մարսիգլիւ գնալ։ Ախը, ի՞նչ պէտք է ասէն մնմեանց։ Նրանք ի՞նչպէս պէտք նախատէն այն հնոցը, որին երկուսն էլ այնքան ջերմ սիրում են։ Բայց դրանից, Նա վախենում էր տան մնաց անդամներին պատահելուց։ Երկտասպրդների հետաքրքիր նայուածքները . . . տատակի սովետնիկի (Արլայի հօր) խիստ դատապարտութիւնն իր աղջկայ դէմ.—չէ, Նրա ոյժը չի պատիլ այդ բոլորը տանելու։

Այդ կերպով անցաւ մի քանի օր։ Նադեժդնի սովետնիկի և նկատի ունենալով իր առաջնկայ արտաստահմանեան ուղևորութիւնը, այս ամառ ամարանոց չէր գնացել, ինչպէս անում էր սովորաբար. քաղաքի բնակարանի սենեակների մեծ մասը փակած էր արեգակից և ցեցից պաշտպանելու համար, իսկ ինքը բնակւում էր միայն մի առանձնասենեակում իր ննջարանի։ Այդ սենեակի կողքին էր գտնւում Արլայի փոքրիկ առանձնասենեակը, ուր միշտ փակւում էր Արլան, երբ ցանկանում էր մենակ մնալ։ Մի անգամ մարդը Նրան ընծայել էր բոլոր ձամշակով շատ չքեղ շինած կահկարասիք, որն Արլան զարդարել էր բայ շահանախագոյն մետաքսի կտորով։ Այդ սենեակը փակած էր և կահկարասիքի վրայ շապիկներ էին հագցրած. բայց մնանգամ Նադեժդնի սովետնիկը մըտաւ այդ սենեակը և բարձրացրաւ վարագոյրները, այնպէս որ բոլոր սենեակը լուսաւորւեց։ Նա կանգնեց Արլայի փոքրիկ պահարանի առաջ, որտեղ Նա սովորութիւն ունէր պահել իր երերը և սկսեց դիտել այդ պահարանի վերև պատի վրայ կախած Նկարը—Իէրէյրի Նահատակը. այդ պատկերն էրնը դեռ Նշանած ժամանակին էր ընծայել Արլային, գտնելով որ Մարսիայի աչքերը չիշեցնում էին իր Նշանածի աչքերը։ Աղօթքի համար մնացրած ձեռները, վեր բարձրացրած աչքերը, չըթունքների վշտալից արտայայտութիւնը և մ՛րթէ սա լինքն Արլան չէր կանգնած Նրա առաջ ու խնդրում ազատել իրան այն կապանքներից, որոնցով Նա լինքն իրան չօժտարակամ կապել էր իրան Նրա հետ և որոնք այժմ այդպիսի անտանելի ծանրութիւն էին պատճառում իրան։ Ի՞նչպէս էր կարող այդ կինը մինչև այդ ատելճան տալ Նրան։ Մ՛րթէ այդ հրնարաւոր էր—առանց կռւի, առանց մի կրքոտ լոսաքի։ Մ՛րթէ ճիշտ Նա նահատակ է, իսկ լինքը Նրա դահիճը, և այժմ այդ նահատակ կինը պաղատանքով դիմում է Նրա գթութեանը։ Ի՞նչ իրաւունք ունի այդ կինն ինձ վրայ Նայել այդպիսի պաղատական Նայուածքով։ Չի՞ որ այդ աչքերը լի են արտասուքով և այդ երկարացրած ձեռքերը մ՛րթէ վիրաւորանք չեն Նրա համար։

Դուռը թեթև թխկացրին և բացին.—Ներս մտաւ սիկին Պֆէյֆէյը Էրնի զօքանչը։ Էրնն առաջին անգամ չկոթւեց... Նա պատճառ էր ուզում գտնել. բոլորովին չկոթւած, Նա սկսեց այս ու այն կողմն ընկնել, իբր թէ բան է փնտրում. գնաց դէպի պատուհանը, եղեցրաւ վարագոյրները, ուղղեց գլխանի ծռւած շապիկը և յետոյ վերադառնալով սենեակի մէջ տեղը, կանգնեց տատակի սովետնիկուհու դիմաց, ջղային արագութեամբ սեղմեց Նրա ձեռքը, փորձեց Նրան մի լոսաք ասել—բայց վերջապէս չկարողանալով ծածկել իր զգացումները՝ գրկեց Նրան ու հեծկլտաց։

(Պրշարունակւի)

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ԲԱԳԻՒՈՒՄ

Բագւայ բոլորովին հակապատիկերն են ներկայացնում Սև-քաղաքն (Բագւից 4 վերստ հեռաւորութեամբ) ու Բալախանին (17 վերստ հեռ.)։ Այստեղ խմբւած է երևտասարդութիւնը, մըտաւոր ոյժը, տոկունութիւնն ու եռանդը։ Ֆաղցը յոյսերով, ապնիւ, վրսեմ գաղափարներով օժտւած ուսանողը ձեմարանից աւարտելով, իր անխռնութիւնը ձեռք բերելու համար եկել է այստեղ, Սև-քաղաքը, մի քանի տարի էլ սև մուխի և փոշու մէջ աշխատելու, որ ձեռք բերելով ցանկալի նիւթական անկախութիւնը՝ իրա գործէ իր հազար ու մի նշան-ցանկութիւնը։ Նա երազել է իր ընկերներին, ուր էլ որ լինին, չըբախտել իր ուսանողական սուրբ երդումը, այն է՝ պետի կարեկից թշւառներին, օգնէ կարօտեալներին. և ահա Նա իր շուրջը ժողոված նըժդեհների մի խումբ, Նրանց հետ աշխատում է, մաքառելով հրեղէն շառաւանների, դժոխային կրակի դէմ։ Ո՞վքեր են արդեօք այդ պանդուխտները, այդ առոյգ, հսկայ երևտասարդները, — սրանք Հայաստանցիք են՝ Սիւնիքից սկսած մինչև Մուշ, Վան, Պարսկաստ։ Այդ երկու պատակարգն էլ եկել են այստեղ անդորրութիւն ձեռք բերելու, նիւթական անկախութեան համեղ պատառն ստանալու։ Սրանց Թըւում տեսայ հայ ուսուցիչներ, երբեմն Մշեան, Էչմիածին, Մարսէյլ տարին մի երկու անգամ իրանց սեփական առևտրական գործերի համար գնացող վաճառականներ։ Բայց ՏԷր Յոսէած, որքան Նրանք փոխւած էին։ Մի հայ օրիորդական ուսումնարանի երբեմն տեսուչ, որին մօտիկից ճանաչում էի, մի բիւզ հագնի, երկար ձիթքերով կօշնկները քաշած, գոյնը փոխած գլխարկը ծածկած, փայտը ձեռնին մի խումբ մշակների աշխատացնել էր տալիս։ Անշուշտ Նա լինձ ճանաչեց, որովհետև Նրա երեսի արտայայտութիւնն խոյոն փոխւեց և չկլւելով ու անկարող լինելով լինձ պատասխանել, Նա աշխատեց թագ կենալ մշակների հետ։ Ուղեցոյցս պատմեց



Նահթահանի մի կինոյ

լինէ սրա ալ լինելը. ես տարօրինակ հաղ եղայ, յուզուեցի և մտայ մշակների խմբի մէջ նրան վինաբելու, բայց նա արդէն անհետացել էր։ Տեսայ այտեղ և մի ուրիշին, արդէն արևմտահան հասակում պարոն. յիշում եմ դրան, ինչպէս ասում են, կատարեալ մի քաշած սուրաթ էր, հօրից ահագին ժառանգութիւն ստացած, մեծ ձեռնարկներ ունէր դա, բայց Նախախնամութիւնը ուրիշ կերպ էր դրա համար անօրինել և այսօր դա մի ցնցոտիում ուղղ էր բանում անցնող հիւրերի համար։ Թչուառ Ճակատագիրը...

Բալահանին տալիս է հում նաւթ. այտեղ են հրեղէն շտեռանները, հօրերը.—հազարաւոր երկտասարդ ուժեր մաշւում են այտեղ և իրանց դառն քրտինքը խառնելով նաւթի առուներին հետ՝ իրանց տէրերին տալիս են անհամար ոսկի։ Սև-քաղաքում, ուր գանւում են գործարանները, այդ հում նաւթից քաշում են կերոսին, որ համարեա ամբողջ Ռուսաստանին և Եւրոպային լոյս է տալիս, իսկ բագուցիներին երջանկութիւն, եթէ կրկամեներ սոսկ հարստութիւնը երջանկութիւն համարել։

Նաւթի հօրերի, գործարանների կառավարիչները համարեա չատ փոքր բացառութեամբ հայ տեխնիկներ, տեխնօլոգներ են։

Սրանք տառնում են իրանց արդիւնաբերող գործարանատէրերից բացի յատկին թոշակից՝ և պատրաստ բնակարան, ծառայ, կառք և այլն։ Ամուսնացածներն այտեղ ապրում են իրանց ընտանիքներով։ Չընայած դրանց նեղ ու փոքր սենեակներին, երբու չուխա մի կէնդ աթոռներին, իմ կարծիքով այդ մուխի և փոշու աշխարհում սրանք աւելի լաւագոյ, մինչև անգամ երջանիկ կենցաղ ունին, քան իրանց արդիւնաբերող տէրերից շատերը։ Որքան կեանք, հրճուանք կայ դրանց ընջանում։ Իրանց խնճոյքից ու հանդէսից բուլում է քաղցրութիւն, դրանց աթոռները վրայ, որոնցից մէկին ոտն է կոտրւած, մնւսի մէջքը և երբորդի կոդը, աւելի ազատ է մտրդ նստում և չենւում, քան ուրիշների քրօնգեայ ու մետաքսեայ բազկաթոռներում։ Եւ որքան համեղ է դրանց Ճաշն ու սուրճը, կարծէք հոյն իսկ այն նաւթի համն ու հոտն էլ մի առանձին արօմատ լինի տալիս սրանց կերակուրներին։ Եւ. Լինչումն է կատանում այդ քաղցրութիւնը.—միայն անկեղծութեան մէջ։ Երկտասարդ տիկինը նստում է դաշնամուրի առաջ և վոկանակ Շոպէնէց, Լիստից, Բէթհօվէնից ածելու՝ նա նւագում է մի մանկական երգ, նրա մանուկը սկսում է երգել և ահա հոգով սքոտած այդ մերօքատօր մանուկներն էլ սկսում են ընկերանալ մանկանը և, օրքան համերաշխութիւն, օրքան պարզութիւն։ Տիկինը վոկում է իր նւագած եղանակը և ածում մի լինչ որ երգիծաբանական - ժողովրդական երգ.—ահա այտեղ պէտք է տեսնել ամբողջ օրը կրակի, վոչու հետ մաքառող երկտասարդներին, որոնք մոռացած կրանց տաժանելի վիճակը, կարծես աշխարհս իրանցը լինի այդ վայրկեանում։ Իսկոյն բերում են հաց, պանիր, գինի և կատարեալ ուսանողական կեանք, որին ընտելացել են և իրանց կանայքն ու քոյրերը բոլորը միասին մի գեղեցիկ համերաշխութիւնով։

Ես միայն Թուրգիի տպաւորութիւններս հաղորդեցի ընթերցողին Բագուայ և մասամբ Բալահանիի մասին. վերջինիս մասին մանաւանդ մի ուրիշ պատեհ ժամանակ առիթ կունենամ աւելի մանրամասն խօսելու։

Բագուից Բալահանի երկաթուղի կայ և օրական մի քանի անգամ գընացքներ թէ երկաթեկուրթեան և թէ ապրանքի համար գնում-գալիս են։ Սակայն շատերը կառքով են գնում, մանաւանդ որ համարեա բոլոր արդիւնաբերողները, գործարանների կառավարիչները սեփական կառքեր ունին։

Մի շատ մեծ յարմարութիւն Բագուայ պէտ մի քաղաքի համար հեռաւոր է, որ բոլոր գրասենեակները, գործարանները ու բնակիչները շատերը բնակարանները միացրուած են միմեանց հետ։

ՄԻՔԱՅԷԼ ՍԵՐՈՐԵԱՆ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ներկայ համարում տպագրում ենք այն հայ գործիչներից մէկի պատկերը, որ իր բոլոր աշխատանքն ու ժամանակը չէ խնայել ծառայելու իր ազգին մի այնպիսի ժամանակ, երբ հայերի մէջ գրագէտներին մատով կարելի էր համարել ու երբ գրականութեամբ եւ թատրոնով զբաղւելը կէս խելագարութիւն էր համարւում։ Պարոն Միքայէլ Պատկանեանն առնուով նւիրւած էր գրականութեան եւ թատրոնին դեռ 1859 թւականին, երբ դեռ ես տրապարակում չկային այն թատրոնական

վերաբանները, որոնք այժմ արդէն տամարում են հայոց թատրոնի հիմնադիրները:

Հայերի մոռացկոտութեան ընդհարիւ, այսօր կարծէք ոչ ոք չէ ուզում յիշել այն ուրախունամեայ ծերունուն, որն ստիպուած լինելով իր երիտասարդական օրերում օրական պարէնը տայթայթել տէրունական զանազան հաստատութիւնների մէջ, պաշտօններ վարելով, միեւնոյն ժամանակ իր բոլոր ազատ ժամանակը նուիրել է հայ գրականութեան եւ քնարն ծառայելու: Միքայէլ Պատկանեանը 1825 թուին մանուկով Մօսկուայի Լազարեան ճեմարանը եւ այնտեղ աւարտելով իր ուսումը, մտել է Մօսկուայի համալսարանի բժշկական բաժինը, բայց անապին հանգամանքներից ստիպուած դուրս է եկել երկրորդ լսարանից: Այդ ժամանակից նա վարել է զանազան պաշտօններ մի քանի տարի շարունակ եղել է դատաստու ռուսաց լեզւի եւ գրականութեան Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, Թիֆլիսի մանուկաց պանսիօնում եւ յետոյ Էջմիածնի հոգեւոր դպրոցում: Մի եւ նոյն ժամանակ պ. Մ. Պատկանեանը մասնակցում էր այն ժամանակուան ռուս եւ հայ թերթերին: 1844 թուին նա առաջինը հրատարակեց „Պարզեւ Մանկանց“ վերնագրով ընթերցանութեան գիրքը, որն մի ժամանակ էլ ընդունուեց իբրեւ հայոց լեզւի դասագիրք պետական գիմնազիաներում: Մ. Պատկանեանի գրչի են պատկանում եւ 1854 թուին տպագրուած „Պատմութիւն Ընկերիգիայի“ եւ “Դաղտնիք Ընկերիգիցիաի“ գրքերի թարգմանութիւնները: 1872 թուականին Մ. Պատկանեանը մեծ ժողովրդականութիւն ստացաւ իր մի կրիտիկական յօդուածով, որ նա տպագրեց „Кавказъ“ լրագրում ռուսաց գրող Դուբրովինի գրքի դէմ: Դուբրովին իր „Պատմութիւն“ ռուսաց պատերազմի եւ Նովկասի տիրապետութեան“ գրքի մէջ շատ անճիշտ եւ անհնարաստ տեղեկութիւններ էր տպագրել Նովկասեան հայերի կեանքի մասին: Պ. Մ. Պատկանեանի յօդուածը հիմնուած էր պատմական փաստերի եւ ժողովրդեան կեանքի ծանօթութեան վրայ եւ շատ լաւ ընդունելութիւն գտաւ նոյն իսկ այն ժամանակուան ռուս մամուլի կողմից: Պ. Պատկանեանի լրագրական մեծ եւ մանր յօդուածները այնքան շատ են որ նրանց վրայ խօսելը շատ երկար կը լինէր: Այդ պատկառելի անձնաւորութեան գլխաւոր ուշադրութիւնը միշտ դարձրած է եղել հայ թատրոնի բարգաւաճման վրայ եւ նա ոչ միայն ինքնուրոյն պիէսներ է տուել հայ բեմին, այլեւ շատ հիմնաւոր եւ խելացի քննադատութիւններ՝ յայտնի „Շուշանիկ“ եւ „Վարդանանց պատերազմ“ պիէսների մասին: Պ. Պատկանեանն այնքան ոգեւորուած էր այդ ժամանակները, որ մինչեւ անգամ ցոյց տալու համար „Շուշանիկի“ բեմական հնարաւորութիւնը, ինքը նոր պիէս գրեց նոյն տերունուհու կեանքից: Ահաւասիկ պ. Պատկանեանի գրած պիէսները.

1. Միջի մարդ կամ՝ մօրիքուլ, կոմեդիա 3 գործ. հին հայաբարբոյց կեանքից (տպագրուած 1859 թ.) 2. Սուտ Բարեկամք. կոմ: 3 գործ. եւ 6 պատկերներով. 3. Վարժապետ. Հերհասդրութիւն Школьный учитель յայտնի պիէսի). 4. Երեք հարսածք. դրամա 3 գործ. 5. Սատանի փայ. ֆանտաստիկական դրամա 3 գործ. 6. Պարիզի կօշկակար. եւ 7. Մէկը՝ նշանած, միւսը՝ կին. կոմ.--վօդ. 3 գործ.

Մ. Ս. Պատկանեան

Այդ պիէսները, գրեթէ ամէնն էլ, լաւ ծանօթ են հայ թատերասէր հասարակութեան եւ նա պարտաւոր է այժմ յիշել իր գործիչներից մէկին, որն արդէն ութսունամեայ հասակում է, բայց նոյն եռանդով սիրում է հայ բեմը եւ հայ գրականութիւնը:

***

Ճեռագիր

ԹԱՐԿՕՎ, Մարտի 28-ին, 12 ժամին եւ 53 րոպէին Խարկով քաղաքով անցաւ դէպի Հարաւ արտակարգ գընացքը, ուր գանուում էր Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդօրովնա: Գնացքը Խարկով կայարանը վերադարձաւ երեկոյեան 6 ժամին եւ 55 րոպէին: Մեծ Իշխանուհու հիւանդութեան պատճառով, որը Ալէքսեեվկա կայարանում այնքան սաստկացաւ, որ անհրաժեշտ դառաւ անյապաղ բժշկական օգնութեան դիմել: Գնացքը կանգնեց Ճանապարհի վրայ: Մեծ Իշխանուհու վագոններում հրաւիրուեցան Օբօլէնսկի, Գրուբբէ, Զարուբին ալօֆէսօրները եւ Ֆրանկօվսկիյ ու Վլշենսկիյ բժիշկները: Թագերի բորբոքումն այնքան սուր կերպարանք էր ստացել, որ հիւանդի դրութիւնն արդէն վտանգաւոր համարուեց, եւ Մեծ Իշխանուհուն վիրահատելին կայարանի Թագաւորական սենեակները: Մարտի 30-ին, հիւանդութիւնը բարդուեց: Մարտի 31-ին, գիշերւայ 10 ժամին հրաւիրուեց մայր եկեղեցու աւագ քահանայ Տիմօֆէյ Պաւլով: 11 ժամին 50 րոպէին Մեծ Իշխանուհին ի Տէր հանգեաւ: Նորին Բարձրութեան մօտ անընդհատ գտնուում էին Փրէյլինա Օզերովա եւ գօֆմէյստէր Մուխանով: Ապրիլի 1-ին, առաւօտեան 7 ժամին եւ 10 րոպէին արտակարգ գնացքով ժամանեց Մեծ Իշխան Նիկօլայ Միխայլովիչ: Սէ. մահուդով ծածկուած մի վագօն պատրաստած է մարմինը Պետերբուրգ փոխադրելու համար: Մարմինը կըզմռսեն այսօր կայարանի շինութեան մէջ: Թագաւորական սենեակները մօտ պահապանները են կանգնած: Այսօր երեկոյեան 8 ժամին Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդօրովնայի մարմինը կուղարկուի արտակարգ սգազգեաց գնացքով մինչեւ Լիբաւ կայարանը, որտեղից եւ Պետերբուրգ, առանձին պալատական կարգադրութիւնից յետոյ:

—

Խմբագրութեան կողմից

„Աղբիւրի“ ապրիլի №-ը, փոխանակ այժմ, լոյս կըտեսնի Զատկին ապրիլի 21-ին:

—

„Աղբիւրի“ այն բաժանորդները, որոնք դեռ չեն ստացել Նոտակ որդին Ա. պրէմիան, կըստանան Զատկից յետոյ, որովհետեւ պատկերները սպասուած են եւ կրկին երկրորդ անգամ պատուիրել ենք եւ արդէն ճանապարհուած է:

—

Յանդրում ենք, մեր այն բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել “Աղբիւրի“ եւ „Տարազի“ բաժանորդագները, փութան մեզ հասցնելու:

—

Ժամանակագրութիւն

Զընայելով տեղական մամուլի մէջ երևցած լուրերին թէ՝ Կովկասեան երկաթուղու համար մշակուում է նոր տարիֆ, մինչև այսօր այդ ենթադրութիւնը չէ իրականանում և դեռ ճանապարհորդական գնացքների գները մնում են առաջուայ թանգութեամբ:

Զարմանալին այն է, որ չընայելով թէ Կովկասեան երկաթուղին արդէն վաղուց անցել է պետական Գանձարանի ձեռքը, այնուամենայնիւ մինչև այժմ՝ չարունակ, առնում են երկա-

թուղթներից, այսպէս անուանուած՝ «տուրքը յօգուտ Դանձարանի» կամ պետական տուրք (государственный сборъ)։ Բոլորովին հասկանալի չէ թէ էլ այդ ինչ տուրք է, քանի որ երկաթուղուց ստացուած բոլոր եկամուտն արդէն պետական Դանձարանն է մտնում և ոչ մասնաւոր ընկերութեան կասսան։

—

Շուշուց մեզ գրում են.— Մի քանի տարի սրանից առաջ այստեղ մատղուելիւն կար հիմնել մի Փոխառու Խնայողական դանձարան։ Այդ առիթով մի քանի ժողովներ կազմուեցին իր ժամանակին և վերջ ի վերջոյ բանից դուրս եկաւ որ մի քանի դատարկապորտ, անանկացած մարդիկ ցանկանում են իրանց համար պաշտօններ ստեղծել և մի անդուկ գըտնել, որտեղ միչտ, անպատիժ կարող են ձգել իրանց ձեռքը և ուզածներին չափ փող կորզել այնտեղից։

Այդպիսով գործը քնեց և խնայողական Դանձարանի խնդիրն էլ մեռաւ. մինչդեռ այդպիսի մի դանձարան անհրաժեչտ է Շուչւայ պէս քաղաքում, ուր ահագին քանակութեամբ արհեստաւորներ և մշակներ կան։

—

Ամսոյս 2-ից սկսած, Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէօդորովնայի մահուան լուրն ստացած օրից Թիֆլիսի բոլոր ռուս և հայ եկեղեցիներում հոգեհանգիստներ են կատարուում։ Պատերազմի քաղաքներից մեզ հաղորդած լուրերի համաձայն, բոլոր եկեղեցիներում կատարուում է հոգեհանգիստ։

—

Վեհափառ Կաթողիկոսը հրամայել է բոլոր հայ վիճակաւոր առաջնորդներին, որ դատարաններում եւ ուրիչ պետական հաստատութիւններ բոլոր հայ լուսաւորչականներին հայ քահանաները երդուեցնեն միմիայն հայ լեզուով, և այն եկեղեցական պաշտօնեաները, որոնք կըչեղչեն Վեհափառ Կաթողիկոսի հրամանը կատարելուց, կենթարկուին պատժի։

—

Այսօր, Թիֆլիսի եկեղեցիներում կատանալու է Թիֆլիսի Ներսիսեան Խլորոցի համար հոգւոբարձուները ընտրող պատգամաւորների ընտրութիւնը։ Ծխականները հրաւիրուած են տոմսակներով։

—

Այսօր, ամսի 7-ին, առաւօտեան 11 ժամին Թիֆլիսի քաղաքային Խորհրդարանի դահլիճում կըկատանայ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Ժողովի պատճառները են. 1, Ընկերութեան տեղական վարչութիւնների համար նոր մշակուած հրահանգը։ 2. Արգահանի տեղական վարչութեան նախահաշիւը, այս 1891 թուի համար։

—

դեղարուեստ

երաժշտութիւն

Այսօր, երեկոյեան Թիֆլիսի Թատրոնում տասնամեայ ջուլթակ ածող Կոստիա Դումչելի երկրորդ կոնցերտն է։ Առաջին կոնցերտին, որը տեղի ունեցաւ անցեալ կիւրակի, շատ քիչ հասարակութիւն կար, որովհետև ինչպէս երևում էր, ոչ ոք չէը հաւատացել թէ տասնամեայ մանուկը կարող էր այնպէս ածել, այն էլ երաժշտական ամենադժուար գործերի վրայ, որ արժենայ նրան լսել։ Բայց բոլորովին սխալուած է հասարակութիւնը։

Կոստիա Դումչելին արժէ տեսնել և արժէ լսել նրա ածելը։ Դումչելը մի տաս տարեկան մանկահասակ երեխայ է, սուր և խոր նայուածքով, զգայուն, ջղոտ արտայայտութեամբ։ Բեմ դուրս եկած րոպէին դուք նկատում էք այդ մանկան վրայ տաղանդի դրոշմը, որը փայլում է նրա նայուածքի և արտայայտութեան մէջ։ Փոքրիկ Կոստիան սկսում է իր ջուլթակը շատ հանգիստ կերպով առանց շփոթելու, ամենայն ճշտութիւնով հասկանալով և պահելով կարևոր բաղխումը (տակտ), ածում է շատ սահուն, ևնայնթաք, մինչև անգամ ամենաբարձր ձայնանիշների վրայ և բարդ ակկորդներում նա չըտաւ և մի ֆալետ։ Զարմանալի լսողութիւն ունի այդ տաղանդաւոր մանուկը և նա մեծ ճշտութեամբ հետևում է նրան դաշնակցող դաշնամուրին, որ շատ անգամ չէ յաջողւում հասակաւոր ջուլթակ ածողներին։

Մենք դժուարանում ենք կարծել թէ Դումչել, այսպէս ասել, անարուեստ, չկշողութեան ուժով է ածում. թէ նա շատ հարուստ չկշողութիւն ունի՝ այդ անկասկածելի է, բայց մինչևնոյն ժամանակ նրա կրծքի աջ և ձախ ձեռները դիւրքից, ջուլթակի բռնելուց և տղեղի շարժումից պարզ երևում է, որ Դումչելը անծանօթ չէ կարեւոր տեխնիկական մասին և բաւական լաւ շկոլայի աշակերտ է. Նրա խաղի ապդեցութեան գաղտնիքը մեղմութեան և աջ ձեռի վերին մասնճանի զգայնութեան մէջն է։ Զարմանալի և անսպասելի յաջող են դուրս գալիս այդ մանկան ձեռքից դժուար ստակատօ րիքօշէ հարւածները, որը նա կատարում է մեծ ճարպկութիւնով։ Փոքրիկ Կոստիան իր ածելու բոլոր ընթացքում աչքերը չարունակ պտտցնում է Թատրոնի գանազան կողմերը. բայց այդ երեւում է որ ստիպողական է, այսպէս ասել, սովորեցրած է նրան. ածած պիէսները լուրջ և դժուար տեղերում նա յանկարծ սեղմում է ծնօտը ջուլթակին և այդ վայրկեանին դուք նկատում էք նրա մէջ խորն զգացում, որ տևում է մի քանի րոպէ և այդ րոպէին դուք կարող էք երևակայել թէ այդ մանուկը ժամանակին հանճարաւոր ածողների շարքումն է լինելու։ Խորհուրդ ենք տալիս հայ ծրնողներին, անպատճառ տանել իրանց երեխաներին լսելու փոքրիկ արտիստին, որը կունենայ իր հասակակիցների վրայ մեծ բարոյական և գեղարուեստական ազդեցութիւն։

—

Անցեալ երեքշաբթի քաղաքային Թատրոնում պ. Տարտակովի կոնցերտն էր տ. Զարուդնայի մասնակցութեամբ։ Պ. Տարտակովը, որ Թիֆլիսի երաժշտական աշխարհի սիրելիներից մէկն է, անցեալ ձմեռային սեզոնին Թիֆլիսում չէը, բայց նա չէը մոռացել իր տաղանդի երկրպագուներին, և այս մեծ պատճն եկել էր, ինչպէս յայտարարուած էը, միայն մի կոնցերտ տալու։ Մեզ Թւում էը, որ այդ օրը Թատրոնում ասեղ գցելու տեղ չըսկսի լինէը, մանաւանդ որ կոնցերտն նախընթաց և նոյն օրը՝ Տարտակուհիներից չատերն արդէն կենդանի և ազդու յայտարար էին գարձել քաղաքում։ Սակայն, մրքան զարմանք. Թատրոնը համարեա բոլորովին դատարկ էը և պ. Տարտակովը երգեց մի չատ սահմանափակ, նրա տաղանդը չը դատաճանող հասարակութեան առաջ, որն անկեղծ և սիրալիր ծափահարութիւններով ցոյցեր արաւ դեղագէտ հիւրին։ Պ. Տարտակովը իր չատուկ լրտոյտ և հարթ ձայնով երգեց դեղեցիկ։ Տիկ. Զարուդնային էլ հասարակութիւնը ողջունեց բուռն ծափահարութիւններով։ Առհասարակ այդ օրւայ կոնցերտն աւելի ընտանեկանի էր նմանում։

մամուլի տեսութիւն

Մենք չըգիտենք ընթերցողը երբ և երչ կանգ է առել շատ չաճախ լսող մինչև անգամ գրքերում և լրագիրներում տպուած „ապօրինի զաւակ“ խօսքերի վրայ։ Երկու բառ, որոնք կարող են անկերջ մտածութեան առիթ տալ. ամեն այն անձանց, որոնց սրտում ամենախոր սէր կայ դէպի մարդը։

Ո՞վ և ինչ է ապօրինի զաւակը։ Ապօրինի զաւակ կոչած արարածը մարդ է, որն աշխարհ է գալիս, ծնւում է ինչ ոչնպէս, ինչպէս և բոլոր մահկանացուները աշխարհիս երեսին. Նրա աշխարհ գալու պատճառները նոյն են, ինչպէս և ամեն մարդունը. բնութեան օրէնքները, Աստուածային օրէնքները մի մարդուչան չեն խախտում այդ մարդու աշխարհ գալուիը, որովհետև Նա ևս ուրիչ մարդկանց նման կրում է „Աստուածային պատկերը“, բայց Նա երեւան գալով անուանում է ապօրինի։ Գուցէ Նա ամենաարգելք, ամենանախեձ սիրոյ զաւակ է, բայց Նա խանձարուրի մէջ միչտում է ոչ իրրև մարդ և ոչ իրրև քրիստոնեայ, այլ Նրա առաջին տացած անունն է ապօրինի զաւակ և չեայ այդ կոչմանը հետևում է մի անուն, Մարկոս, Կիրակոս և այլն։ Գուցէ այդ աշխարհն հարստատ որդին, բայց մարդ-

կանց համար անկոչ հիւրը մի տաղանդ է, գուցէ նրա տաղանդն այնքան բազմակողմանի է, որ նա մի հանճար է, բայց լինչ կանէք, որ ամբողջական գոյութիւնը մարդկութիւնը չի խոստովանում և ապօրինի է համարւում աշխարհիս ամենաօրինաւոր երևոյթը—մարդկային ծնունդը։ Գուցէ այդ անմեղ ժպիտը բերնին երևևացող մանուկը ստզոյութեան է բոլոր մարդկութեան սիրոյն ու վշտոյը, գուցէ նա առաւօտ տեսնելու է այն երանելի պօհեմական աշխարհը, որն ստեղծել է Տասսայի, Դանտի, Բայրօնի, Շօպէնի, Բեթհովէնի, Լիստի, Բուդդայի, և նոյն իսկ Քրիստոսի հանճարը,— գուցէ նա այդ բոլորի համապատասխանը է ներկայացնելու, այնու ամենայնիւ նա ապօրինի է, նրա վրայ նայում են միայն, բայց չեն տեսնում, նրան ախանջ են դնում, բայց չեն լսում, որովհետև „աչք են և ոչ տեսանեն, ականջք են և ոչ լսեն“։

Թողնելով որ ընթերցողն ինքը մտածէ այդ անմեղ-մեղաւորների մասին, անցնենք այն առիթին, որը մեզ թելադրեց վերևի տողերը։ Եւրոպական մամուլի մէջ վաղուց է բարձրացած այս մինչև Ամերիկոյ աթոռը բողոքող խնդիրը և շատ տեղ մինչև անգամ նա վճռւած է ամենաարդար կերպով, այժմ այդ խնդիրը բարձրանում է և ռուս մամուլի մէջ, ոչ առաջին անգամ, բայց այս անգամ հիմնւած նոր պետական օրէնսդրական մի քայլի վրայ, որը փոխում է մի ամբողջ դարաւոր ապօրինի անուանւած զաւակների դրութիւնը և հնար գտնել նրանց քաղաքացիական իրաւունքները տալու։ Եւ ինչպես չբերեաքքրքրէ այս խնդրով մամուլը, եթէ նա ճշմարիտ մամուլ է, եթէ նա աչալուրջ հսկում է հասարակական բարոյականութեան, անհատի երջանկութեան և բարօրութեան վրայ։

Մայրաքաղաքի և տեղական մամուլի մի երկու օրգաններին հեռւոզնելն արդէն կարդացել են, որ արդարադատութեան մինիստրն արդէն մշակել է մի օրինագիծ երեխաները որդեգրելու մասին. այդ նոյն օրինագծի հետ նոյն մինիստրութիւնը առաջարկել է պետական խորհրդին նոյնպէս և մի ուրիշ օրինագիծ, որ-սակից դուրս ծնւած երեխաներին օրինաւոր համարելու մասին։ Այս առիթով մի սրատեսչ, անկեղծ յօդւած ենք գտնում Մոսկւայի „Заря“ շաբաթաթերթում և այդ յօդւածը անհրաժեշտ ենք համարում հաղորդել մեր ընթերցողներին։

„Չէ կարելի չբնատուվանել—ասում է յօդւածի հեղինակը—որ այդ երկու օրինագծերն էլ հիմնւած են մարդասիրական սկզբունքների վրայ, որոնց մէջ արտայայտւում է թէ Պետութիւնը խոստովանում է բնական հանրամարդկային իրաւունքները։ Այնու ամենայնիւ, դեռ իրանց ոյժը պահպանում են այն բնութեան հակառակ պայմանական հասարակական աւանդութիւնները, որոնց հիման վրայ, նոր մարդային արարածի աշխարհ գալը հանդուրժում է մի դէպքում օրինաւոր, իսկ մի այլ դէպքում ապօրինի։ Իբր թէ քաղաքացիական օրէնքները կարող են իրանց որոշումներով կարգաւորել եւ կանոնաւորել մանկան յղութիւնը մօր արգանդում եւ նրա ծնունդը եւ իբր թէ ծնւող արարածը նոյն իսկ այդ ծնւելովը ձեռք է բերում, կամ կորցնում է որոշ քաղաքացիական օրէնքներ, որոնք պատկանում են ամեն մի քաղաքացու։

Անկասկած միայն շատ քիչ դէպքերում օրէնսդրական իշխանութիւնը կարող է աւելի առաջադէմ լինել, թէ իր ժամանակից եւ թէ հասարակական այն աւանդական հասկացողութիւններից, որոնք կարծես հասարակական գիտակցութեան օրինագիրքն (կոդեկսն) են կազմում։ Մեծաւ մասամբ օրէնքները ժամանակից յետ են մնում ու նրանք միայն կանոնաւորում են հասարակական այդ փոխադարձ յարաբերութիւնները, որոնք արդէն անցել են իրանց զարգացման բոլոր աստիճաններով եւ ձուլւել են արդէն ամենքից խոստովանւած մի ձեւի մէջ։ Այդպէս է եւ ներկայ դէպքում, բարգաւած արդարութեան սկզբունքը—որի համաձայն չէ կարող ապօրինի ծնունդ լինել, ինչպէս եւ չեն կարող ապօրինի զաւակներ եւ ապօրինի ծնւած մարդիկ լինել—դեռ չէ ընդունւում պետութիւնից։ Պետութիւնը պահպանում է „ծննդի ապօրինութեան“ գաղափարը եւ պահում է օրինագրքի մէջ „ապօրինածին“ տիտղոսը, բայց հեշտացնում է այդ դրութիւնից դուրս գալն այնտեղ, որտեղ այդ հնարաւոր է. այն է—որ ծնողները պսակւեն եւ որդեգրեն իրանց հարազատ զաւակներին, որոնք ծնւած են մինչեւ պսակը։

Հասկանալի է, որ խնդրի այսպիսի պայմանական ձեւի շնորհիւ դեռ եւս պահպանւում է հասարակական տրադիցիաների ամենախիստ անարդարութիւնը, որի հիման վրայ, երբ ծնողները խախտում են հասարակական բարոյականութեան կողեկսը—մեղն ընկնում է բոլորովին անմեղ երեխաների վրայ, իսկ ծնողներն ազատւում են բնական պարտաւորութիւններից դէպի իրանց որդիքը, որոնք դժբախտութիւն են ունեցել աշխարհ գալ ապօրինածին։ Ժամանակակից կեանքի բարդ պայմանների ամենախիստ անարդարութիւնը, որի հիման վրայ, երբ ծնողները խախտում են հասարակական բարոյականութեան կողեկսը —

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

АРОРЪ
художественная
ТИПОГРАФІЯ
ред. иллюстриров. журнал.
„Агбюръ“ и „Тразъ“
Въ Тифлисѣ
(Уг. Голов. пр. и Барят. ул.)
печатаетъ на русскомъ, Тузем. и европейск. языкахъ
КНИГИ, ГАЗЕТЫ, ЖУРНАЛЫ, БЛАНКИ, КОНТОРСКІЯ КНИГИ, ВИЗИТНЫЯ КАРТОЧКИ. Прієлъ всѣ возможныхъ типографическихъ работъ, приготовленіе клише для иллюстрацій. Печатаніе монограммъ для писемъ и пр.

Ներկայ մայիս-յունիս ամիսներում լոյս կը տեսնեն
ՍՐԻՆԴ — ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԱՆԻ
I. ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ եւ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
1880—1890
II. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ 1884—1889
III. ՓՈՔՐԻԿԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ
Պատկերազարդ մանկական վէպ:
Այս երեք հրատարակութեանս գինն է Մէկ րուբլի:
Դիմել Тифлисъ. Аршаку Меграбянъ Въ конторѣ Ред. „Агбюръ“.

Ա. ՐՈՒՄԱՆՅԱՆ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ
(Литографія)
Թիֆլիսում: Հարեւանցիական փող., իւր. Ծումնանոցի տ. №8
Յայտնում է պ.պ. պատուէր ստանձնելիս, որ տարեվերջին ԱՆՀԱՄԵՄԱՏ աստղած վճարով ամենայարդարագործ
ԱՐԱՏԱՏԻՊ ՄԵՔԵՆԱՅ
Մինչեւ այժմ ունի պատուէրները կատարել ԱՆՀԱՄԵՄԱՏ
ԱՐԱՒԱ եւ ԷԺԱՆ քան ուրիշները, ՍԱՆԱՀԱՍԱՆ
Երբ մեծ քանակութեամբ է պատուէրը: 5—50

Ա.ՐՈՐ
Գեղարուեստական տպարանի
Մամուլի տուակ է
ԵՂԻՑԵ
Աշխարհաբար Թարգ. Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆՑԻ

Ալեքսի 7-ին, Կիրակի, ս. Պետրոսեան Հայ դերասանական խմբի մասնակցութեամբ կը ներկայացնէ
„ՈՒՐԻԵԼ ԱԿՈՍՏԱ“
Սկիզբը 8 ժ. երեկոյեան

Ի Շ Ո
ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ
Ժողովրդական վէպ քննադատութիւն վաճառւում է „Աղբիւրի“ գրատնից. եւ Թիֆլիսի գրավաճառների մօտ
Գինը 15 կոպ.

ՇՄԻԴԻ
Ա Ա
Թարգ. Ս. Հախումեանի
Գինը 10 կոպ.

Հայոց տեւական ԱՂՔԱՍԱՆԴՈՒՀ ԾԱՏՈՒՐՆԱՆ „ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“
Գիւն է 50 կոպէկ
Ճանապարհածախսով 60 կոպէկ: գանկացողները դիմումեն հետեւեալ հասցէով. Москва, Газетный пер. д. Лапозова, въ типографію М. Бархударова.

Уроки армянскаго языка, армянской исторіи и исторіи армянской литературы Спросить въ конторѣ редакціи „Агбюръ и Тразъ“. 5—10.

Ա.ՐՈՐ
Գեղարուեստական տպարանի
Մամուլի տուակ է
ԵՂԻՑԵ
Աշխարհաբար Թարգ. Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆՑԻ

Վարձով տրուում է ԲՆԱԿԱՐԱՆ ՎԵՑ ՍԵՆՆԱԿԻՑ, խոհանոցով եւ բոլոր պարագաներով. մօտ բազ, պարտէզ:
Վերա, Նոր փողոց՝ տուն Խլիմարեանցի
2—3

Ա.ՐՈՐ
Գեղարուեստական տպարանի
Մամուլի տուակ է
ԵՂԻՑԵ
Աշխարհաբար Թարգ. Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆՑԻ

Ընդհանուր ժողովը, որի քննութեանն եւ հաստատութեանն առանձնակի են 1) Ընկեր. Տեղական Վարչութիւնների համար նոր նշանակուած հրահանգը. 2) Ընկեր. Արդահանի Տեղական Վարչութեան նախահաշիւը այս 1891 թուականի համար:

Վ. ՓՈՓՈՋԵԱՆՑԻ
ԽԱԹ-ՍԱՐԱՍ
(Հայ քոշմանների կեանքից)
Գինն է 15 կոպ.
Ծախվում է Թիֆլիզի գրավաճառների մօտ և „Մուրճի“ խմբագրատանը

Ընդհանուր ժողովը, որի քննութեանն եւ հաստատութեանն առանձնակի են 1) Ընկեր. Տեղական Վարչութիւնների համար նոր նշանակուած հրահանգը. 2) Ընկեր. Արդահանի Տեղական Վարչութեան նախահաշիւը այս 1891 թուականի համար:

Մեծ իշխանուհի Օլգայ Ֆեօդորովնա

† 31 ՄԱՐՏԻ 1891 թ. ԽԱՐԿՈՎ

„Ցարւոգի“ № 13-ի յաւելուած